



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2023 թվականի թիվ 238-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՎԵՏԻՔ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի մայիսի 30-ի նիստում, քննարկելով անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Ա. Հակոբյան**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 12-ի «Անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 208-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 208-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-01789/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 23-ին ընդունել է «Թիվ ՀԳ-01789/23 վարույթով պատասխանող անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարելու և արագացված վարույթ կիրառելու մասին» թիվ 236-Ա որոշումը (այսուհետ նաև՝ **թիվ 236-Ա որոշում**):

2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2023 թվականի մայիսի 4-ի թիվ ՄՊՀ-003826 գեկուցագրով առաջարկել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Վարույթը հարուցվել է ԱՁ Ա. Հակոբյանի վարքագծում շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

3. ԱԶ Ա. Հակոբյանի դիրքորոշումը.

ԱԶ Ա. Հակոբյանը 2023 թվականի մայիսի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել միջնորդություն (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**)՝ հայտնելով, որ Վարույթով իրեն վերագրվող իրավախախտումն ընդունում է: Միաժամանակ, ԱԶ Ա. Հակոբյանը հայտնել է, որ ԱԶ Ա. Հակոբյանի վերաբերյալ հարուցված թիվ ՀԳ-01305/23 վարույթի շրջանակներում Հանձնաժողովին տեղեկացրել է, որ խնդրահարույց ապրանքը ներկայումս շրջանառությունում առկա չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ԱԶ Ա. Հակոբյանը խնդրել է կիրառել արագացված վարույթ:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 278-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերի 19-ին «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում (այսուհետ նաև՝ **«Պար-Արտ» ընկերություն**) իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 278 արձանագրությունը:

Հսկիչ գնման արդյունքում, ի թիվս այլնի, ձեռք է բերվել «Ոսկե Սեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ ապրանքը, որի փաթեթվածքի վրա առկա է հետևյալ մականշումը. ««Շիրակ», «Լոռի Excluzive», «09 NOV 2022», «պատրաստված է անարատ կաթից», «յուղայնությունը 50%», Բաղադրությունը՝ կովի անարատ պաստերիզացված կաթ 100%, կերակրի աղ, կալցիումի քլորիդ, բնական ներկանյութ աննատո (E160b), բակտերիալ կուլտուրա, շրճանաֆերմենտ, էներգետիկ արժեքը 100գ-ում՝ 331կկալ/1385կՋ, Սննդային արժեքը 100 գ-ում՝ ճարպեր 28գ., սպիտակուցներ 22գ., աղ 3.5-4.5գ.: Պահպանման ժամկետը +2°C +5°C ջերմաստիճանում 6 ամիս, Արտադրող «Ոսկե Սեր» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք: Հեռ. 091-49-63-33» (այսուհետ նաև՝ **Ապրանք**):

2) Հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 1-ի ««Ոսկե Սեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 48-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-00271/23 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-00271/23 վարույթ**):

Թիվ ՀԳ-00271/23 վարույթը հարուցվել է Ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքի փաթեթվածքի մականշվածքում դրա անվանումը «կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք՝ արտադրված (պատրաստված) պանրի տեխնոլոգիայով» չնշելով և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը չնշելով Ապրանքը իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության առերևույթ առկայության հիմքով:

Թիվ ՀԳ-00271/23 վարույթի շրջանակներում Ընկերությունը, ի թիվս այլնի, հայտնել է, որ «Պար-Արտ» ընկերությունից հսկիչ գնմամբ ձեռքբերված «Լոռի» ապրանքատեսակը չի համարվում Ընկերության արտադրանք և վերջինիս պատկանող պիտակը տվյալ ապրանքի վրա հայտնվելու փաստը Հանձնաժողովը կարող է պարզել ԱԶ Ա. Հակոբյանից:

3) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի փետրվարի 28-ի թիվ 001785 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել Հսկիչ գնմամբ ձեռքբերված Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի մարտի 6-ին ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ ԱԶ Ա. Հակոբյանը 2022 թվականի նոյեմբերի 15-ին (հարկային հաշիվ թիվ Ա6034568749), 2022 թվականի դեկտեմբերի 6-ին (հարկային հաշիվ թիվ Ա7010701438) և (հարկային հաշիվ թիվ Ա9379965544), 2022 թվականի դեկտեմբերի 15-ին (հարկային հաշիվ թիվ Ա1569034218) «Պար-Արտ» ընկերությանը մատակարարել է ընդհանուր կիլոգրամ «Լոռի Էքսկյուզիվ» անվանումով պանիր:

4) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մարտի 13-ի թիվ 001850 գրությամբ ԱԶ Ա. Հակոբյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. ԱԶ Ա. Հակոբյանի կողմից ե՞րբվանից է «Պար-Արտ» ընկերությանը իրացվում Ապրանքը, այլ տնտեսավարող սուբյեկտներին Ապրանքն իրացվելու դեպքում՝ նշել դրանց անվանումները և յուրաքանչյուր մատակարարման սկզբնաժամկետները,

2. Ու՞մ կողմից է արտադրվում (անվանումը և ՀՎՀՀ-ն) և որտե՞ղ է արտադրվում (արտադրամասի հասցեն) Ապրանքը՝ կցելով հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

3. ԱԶ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

4. Ընկերության և ԱԶ Ա. Հակոբյանի միջև կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր, դրանց փոփոխություններ, հաշիվ-ապրանքագրեր, հանձնման-ընդունման ակտեր և այլն) պատճենները:

ԱԶ Ա. Հակոբյանը 2023 թվականի մարտի 22-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ապրանքն արտադրվում է «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ազատան, 54/6, ՀՎՀՀ 05801607):

ԱԶ Ա. Հակոբյանը հայտնել է նաև, որ 2017 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2018 թվականի հունվարի 26-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունում աշխատել է որպես առաքիչ՝ կցելով համապատասխան փաստաթղթերի պատճենները:

ԱԶ Ա. Հակոբյանը որպես Ապրանքի ձեռքբերում ներկայացրել է 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ Ա2740687723 հարկային հաշիվը, որի համաձայն՝ ԱԶ Ա. Հակոբյանը «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք է բերել

կիլոգրամ «Չանախ 50% յուղ» անվանումով պանրային արտադրանք:

Միաժամանակ, ԱԶ Ա. Հակոբյանը նշել է, որ Ընկերությունում ավարտելով աշխատանքը՝ սկսել է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ թվում՝ պանրի վերավաճառք: Բացի այդ, ԱԶ Ա. Հակոբյանը նշել է, որ Ընկերությունում

աշխատանքն ավարտելուց հետո իր մոտ մնացել է Ընկերությանը պատկանող «Լոռի Excluzive» անվանումով պիտակներ:

Ըստ ԱԶ Ա. Հակոբյանի՝ ձեռքբերելով «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից «Չանախ 50% յուղ» անվանումով պանրային արտադրանքը սխալմամբ տվյալ ապրանքի վրա փակցրել է «Լոռի Excluzive» անվանումով պիտակը և մատակարարել «Պար-Արտ» ընկերությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ սխալմամբ փակցված պիտակներով ապրանքները հնարարվոր չէ նույնականացնել՝ ԱԶ Ա. Հակոբյանը նշել է, որ չի կարող տալ տեղեկատվություն առ այն, թե տվյալ ապրանքները որ տնտեսավարող սուբյեկտներին է մատակարարվել:

Միաժամանակ, ԱԶ Ա. Հակոբյանը հայտնել է, որ 2022 թվականի օգոստոսի 3-ից համագործակցում է «Կայգեր», 2021 թվականի մարտի 22-ից «Երևան Սիթի», 2022 թվականի հուլիսի 13-ից «Նոր Զովք» և 2021 թվականի ապրիլի 2-ից «Տիտան» սուպերմարկետների հետ:

5) Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկության համաձայն՝ ԱԶ Ա. Հակոբյանը գործունեությունը ծավալում է 2021 թվականի մարտի 1-ից:

6) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մարտի 1-ի թիվ ԳԳ-173 գրությամբ Հանձնաժողովը դիմել է Պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ ՊԵԿ)՝ խնդրելով, ի թիվս այլնի, տրամադրել ԱԶ Ա. Հակոբյանի կողմից 2021-2022 թվականներին դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2023 թվականի մարտի 7-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝

7) ՊԵԿ տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝

5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

1. Վարույթը հարուցվել է ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «Ոսկե Սեր» ֆիրմային անվանման օգտագործման միջոցով շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

2. Հանձնաժողովը թիվ 236-Ա որոշմամբ բավարարել է արագացված վարույթ կիրառելու մասին ԱԶ Ա. Հակոբյանի միջնորդությունը և կիրառել է արագացված վարույթ:

3. ԱԶ Ա. Հակոբյանը գործունեությունը ծավալում է 2021 թվականի մարտի 1-ից:

4. ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝

5. ՊԵԿ տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝

6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

1) ԱԶ Ա. Հակոբյանի կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.

Վարույթը հարուցվել է ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «Ոսկե Սեր» ֆիրմային անվանման օգտագործման միջոցով շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործումը, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Վերոգրյալ նորմերից բխում է, որ օրենսդիրը ցանկացած պարագայում անբարեխիղճ մրցակցության առաջացման պայման է սահմանել տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացումը կամ դրա հնարավորությունը, որը, ի թիվս այլնի, դրսևորվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված

ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործմամբ, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

ԱՁ Ա. Հակոբյանը 2023 թվականի մայիսի 19-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ հայտնել է, որ Վարույթով իրեն վերագրվող իրավախախտումն ընդունում է: Միաժամանակ, ԱՁ Ա. Հակոբյանը հայտնել է, որ ԱՁ Ա. Հակոբյանի վերաբերյալ հարուցված թիվ ՀԳ-01305/23 վարույթի շրջանակներում Հանձնաժողովին տեղեկացրել է, որ խնդրահարույց ապրանքը ներկայումս շրջանառությունում առկա չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ԱՁ Ա. Հակոբյանը միջնորդել է կիրառել արագացված վարույթ:

Հանձնաժողովը թիվ 236-Ա որոշմամբ բավարարել է Միջնորդությունը՝ կիրառելով արագացված վարույթ:

Օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի՝ ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքի պիտակի վրա «Ոսկե Սեր» ֆիրմային անվանմանը նույնական ֆիրմային անվանում օգտագործելը պարունակում է շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

2) ԱՁ Ա. Հակոբյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 24-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 31-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը հարուցված և իրականացվող վարույթներում պատասխանատվության միջոցի ընտրությունն ու տուգանքի հաշվարկումն իրականացվում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ ակցիաների առնչությամբ դրսևորված հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ իրավախախտումների, որոնց դեպքում պատասխանատվության միջոցի ընտրությունն ու տուգանքի հաշվարկումն իրականացվում են սույն որոշմամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$S = P + P \times (\sigma - U)$$

Որտեղ՝

S-տուգանքի չափ,

P-տուգանքի բազային գումար,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումար,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն:

Բազային գումարի հաշվարկը.

Մեթոդաբանության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, բացառությամբ ակցիաների:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է $P = < \times 2.5\% \times \sigma$ բանաձևով, որտեղ՝

P-ն տուգանքի բազային գումարն է,

<-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է,

σ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

Ապրանքի իրացումից ստացված հասույթ.

Մեթոդաբանության 22-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք ընդունվող հասույթի ընտրությունն իրականացվում է Մեթոդաբանության 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

Իրավախախտման տևողությունը.

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերը:

Հաշվի առնելով, որ

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

$$Բ = Հ \times Խ \times Ժ =$$

ՀՀ դրամ:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 31-32-րդ կետերով և 39-40-րդ կետերով սահմանված են երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով Հանձնաժողովի կողմից որպես ծանրացնող և մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել:

Սույն դեպքում Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովի կողմից հաշվի առնվող այլ հանգամանքներ առկա չեն:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 0%, իսկ մեղմացնող հանգամանքներինը՝ 0%:

Տուգանքի հաշվարկը.

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

$$S = Բ + Բ \times (Ծ - Մ) =$$

ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 47-րդ կետի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է Մեթոդաբանությամբ հաշվարկված տուգանքի 50 տոկոսը: Այսինքն, ԱՁ Ա. Հակոբյանի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է 847 073 ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 10-րդ կետի համաձայն՝ տուգանքի վերջնական գումարը կլորացվում է դեպի ներքև 1000 ՀՀ դրամի ճշգրտությամբ, հետևաբար, ԱՁ Ա. Հակոբյանի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է 847 000 (ութ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ:

3) ԱՁ Ա. Հակոբյանին հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 236-Ա որոշմամբ կիրառվել է արագացված վարույթ՝ Հանձնաժողովը գտնում է, որ բացակայում է ԱՁ Ա. Հակոբյանին հանձնարարություն տալու անհրաժեշտությունը:

7. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 88-րդ հոդվածի 6-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի կողմից «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ, 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված ապրանքի պիտակի վրա «Ոսկե Սեր» ֆիրմային անվանմանը նույնական ֆիրմային անվանում օգտագործելը որակել որպես շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի նկատմամբ նշանակել 847 000 (ութե հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանին հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2023 թ. մայիսի 30
Երևան